Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-173[1]-02.11.2017-ՏՏԳԲ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 8.1 բաժինը շարադրել նոր խմբագրությամբ.

	«8.1. Ջրային ոլորտ								
1.	Խմելու ջրամատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցում	ՀԾԿՀ		Ա	Փ	-	-	Հ	Վ»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի 1-ին:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ~~*օրենքի*~~ ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 8.1 բաժինը շարադրել ~~հետևյալ~~ նոր խմբագրությամբ.

	«8.1. Ձրային ոլորտ							
1.	Խմելու ջրամատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցում	ՀԾԿ	Ա	Փ	-	-	Հ	Վ»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~2019~~ 2020թ. հունվարի 1-ին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1.	**«ՀՅՊ» խմբակցություն**	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը «4-րդ» բառից հետո լրացնել «1-ին,» բառով:	Առաջարկությունը իրացված է, հոդվածը խմբագրված է: Համապատասխան փոփոխություն է կատարվել նաև նախագծի 14-րդ հոդվածում:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
2.		Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «1. Ջրօգտագործումից հետո հեռացվող ջրային ռեսուրսների կրկնակի (երկրորդային) ջրօգտագործումն ապահովելու համար համապատասխան ենթակառուցվածքներ ստեղծելու և կրկնակի	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

			(երկրորդային) ջրօգտագործում իրականացվելու դեպքում ջրային ռեսուրսից ջրառ իրականացնող անձի համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանվում են բնօգտագործման վճարների հաշվարկման արտոնություններ: Կրկնակի (երկրորդային) ջրօգտագործողի համար կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման տրված ջրային ռեսուրսների նկատմամբ բնօգտագործման վճար չի հաշվարկվում:»:		
1.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդվածի 1-3-րդ մասեր, 6-րդ, և 12-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին հոդվածի 1-3-րդ մասերում, 6-րդ և 12-րդ հոդվածներում «հետևյալ» բառը փոխարինել «նոր» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
2.		1-ին հոդվածի 1-ին մաս	«շրջակա միջավայր» բառերը փոխարինել «ջրային ռեսուրս» բառերով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
3.		1-ին հոդվածի 5-րդ մասի 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ պարբերություններ	5-րդ մասի՝ ա) 7-րդ պարբերությունը տեղափոխել 10-րդ պարբերություն, քանի որ «ջրահեռացման համակարգ» հասկացությունը անհրաժեշտ է սահմանել «ջրահեռացման անհատական (տեղային) համակարգ» հասկացությունից հետո, ինչպես նաև «որի օգնությամբ իրականացվում է», «փոխադրումը», «շրջակա միջավայր» բառերը համապատասխանաբար փոխարինել «որը թույլ է տալիս իրականացնել», «տեղափոխումը», «ջրային ռեսուրս» բառերով և «ջրային ռեսուրս» բառից հետո լրացնել «կամ կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման» բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

			բ) 8-րդ պարբերությունում՝ - «խմբային ջրահեռացման» բառերը փոխարինել «ջրահեռացման խմբային» բառերով, - «ու սենքեր» բառերը հանել: գ) 8-րդ և 9-րդ պարբերություններում «ընդունումը» բառը փոխարինել «հավաքումը» բառով և «կառուց-վածքներում» բառից հետո լրացնել «և արտահոսքը (արտանետումը) ջրային ռեսուրս կամ կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման» բառերով: դ) 10-րդ պարբերությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «ջրահեռացման անհատական (տեղային) համակարգ՝ ՀՏԿ-ների համակարգ, որը թույլ է տա-լիս իրականացնել հասարակական, արտադրական և այլ օբյեկտներում առաջացող կենցաղային, տա-րափային (հեղեղային) և արտադրական կեղտաջրե-րի հավաքումը և մաքրումը և արտահոսքը (արտա-նետումը) ջրային ռեսուրս կամ կրկնակի (երկրոր-դային) ջրօգտագործման կամ այլ ՀՏԿ համակարգ.»		
4.		4-րդ և 8-րդ հոդվածներ	Նախագծի 4-րդ և 8-րդ հոդվածները «բովանդակությամբ» բառից հետո լրացնել «նոր» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
5.		4-րդ և 10-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածից «5.» և 10-րդ հոդվածից «2.» թվերը հանել՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնները:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

6.		5-րդ հոդված	Հոդվածը հանել:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
7.		6-րդ հոդված	6-րդ հոդվածով առաջարկվող Օրենսգրքի 25.1-ին հոդվածի 2-րդ մասը «նշանակությամբ» բառից հետո լրացնել «՝ ըստ ջրօգտագործման նպատակին համապատասխանող ջրին ներկայացվող պահանջների» բառերը, իսկ 3-րդ մասը հանել:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
8.		8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող նոր 6.1-ին գլխի 62.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետում «արտահոսքի» բառից հետո լրացնել «ընդհանուր և անհատական» բառերը: Նույն ենթակետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. «Արտադրական կեղտաջուր արտանետողների կող-մից արտադրական կեղտաջրերի՝ ջրային ռեսուրս արտանետման դեպքում թույլատրելի սահմանային արտահոսքի ընդհանուր պահանջները, ինչպես նաև անհատական պահանջների տրամադրման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապե-տության ջրային ռեսուրսների կառավարման և պահ-պանության մարմինը.».	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
9.		8-րդ հոդված	4-րդ, 5-րդ ենթակետերում երկրորդ և 6-րդ և 7-րդ ենթակետերում «կեղտաջրերի» բառը փոխարինել «ջրերի» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

10.		14-րդ հոդված	Նախագծի 14-րդ հոդվածի՝ 1) վերնագրում «Անցումային դրույթներ» բառերից առաջ լրացնել «Եզրափակիչ մաս և» բառերը: 2) 1-ին մասի «2-6-րդ» բառերը փոխարինել «3-5-րդ» բառերով: 3) 2-րդ մասում «օրենքի» բառից առաջ լրացնել «սույն» բառով, 4-6-րդ մասերում և 8-րդ մասի 5-րդ ենթակետում «Օրենքի 8-րդ» բառերը փոխարինել «Սույն օրենքի 7-րդ» բառերով: 4) 5-րդ մասի «5-րդ մասը» բառերը փոխարինել «1-ին մասի 5-րդ կետը» բառերով: 5) 8-րդ մասի 2-րդ կետի «կեղտաջրերի հեռացման» բառերը փոխարինել «ջրահեռացման» բառով՝ ապահովելու համար համապատասխանություն Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող՝ Օրենսգրքի 62.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, իսկ 4-րդ կետի «պահանջները» բառը՝ «ընդհանուր պահանջները, ինչպես նաև անհատական պահանջների տրամադրման կարգը և պայմանները» բառերով՝ ապահովելու համար համապատասխանություն Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող՝ Օրենսգրքի 62.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները: 6) 8-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով. «***6)*** Սույն օրենքի 5-րդ հոդվածով փոփոխվող Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 25.1-ին հոդվածով նախատեսված հարկային արտոնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով՝ վեց ամսվա ընթացքում:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

11.		14-րդ հոդված	Նախագծի 14-րդ հոդվածի 8-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նախատեսվում է վարչական պատասխանատվություն Օրենքի 8-րդ հոդվածով լրացվող 62.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-7-րդ կետերով սահմանված պահանջների խախտման համար՝ վեց ամսվա ընթացքում: Նման կարգավորման դեպքում 2019 թվականի հունվարի 1-ին, երբ, Նախագծի 14-րդ հոդվածի համաձայն, ուժի մեջ մտած կլինեն Օրենսգրքի 62.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերը, 6 ամիս կունենանք ուժի մեջ մտած արգելքներ, որոնց համար պատասխանատվություն նախատեսված չի լինի: Ուստի, առաջարկում ենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխությունների կատարումը կազմակերպել այնպես, որ դրանք ևս ուժի մեջ մտնեն 2019 թվականի հունվարի 1-ին: Այդ իսկ պատճառով ներկայացված օրենքների նախածերն ուժի մեջ են մտնելու 2020 թվականի հունվարի 1-ից: Հետևաբար նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասում, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի 2-րդ հոդվածներում «2019» թիվը փոխարինել «2020» թվով: Նախագծի 14-րդ հոդվածից հանվել են 3-րդ և 7-րդ կետերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
12.		1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը «օրենքի» բառից առաջ լրացնել «ՀՕ-193» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, իսկ «հետևյալ» բառը փոխարինել «նոր» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
13.		1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «հետևյալ» բառը փոխարինել «նոր» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է: